Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

♦ **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Հակոբ Արշակյան,

♦ **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ,

♦ **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Թաիլանդի Թագավորություն, քաղաք Բանգկոկ, 2018թ. օգոստոսի 26-ից սեպտեմբերի 1-ը:

♦ **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ**

ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համար տնտեսական և սոցիալական հանձնաժողով:

♦ **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տեղեկատվական գերմայրուղու ղեկավար կոմիտեի երկրորդ նիստին և ՄԱԿ-ի Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական և սոցիալական հանձնաժողովի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների, գիտության, տեխնոլոգիաների և նորարարության կոմիտեի երկրորդ նիստին:

♦ **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2018թ. օգոստոսի 27-ից 31-ը ք. Բանգկոկում կայացան ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տեղեկատվական գերմայրուղու ղեկավար կոմիտեի երկրորդ նիստը և ՄԱԿ-ի Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական և սոցիալական հանձնաժողովի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների, գիտության, տեխնոլոգիաների և նորարարության կոմիտեի երկրորդ նիստը, որոնց ընթացքում Հայաստանի Հանրապետությունը ներկայացրեց տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Հակոբ Արշակյանը:

Գործարար համաժողովը իր ուշադրությունը կենտրոնացրեց ՏՀՏ, էլեկտրոնային կառավարման, էլեկտրոնային լուծումների, ինտերնետի և թվայնացման բնագավառներում նորարարությունների ներմուծմանն ու ներթափանցմանն ուղղված ծրագրերի իրականացման, ինչպես նաև ֆինանսական աջակցության ներգրավման վրա:

Գերմայրուղու նիստի հիմնական նպատակը տեղեկատվական գերմայրուղու կառուցման նախագծի քննարկումն էր: Քննարկվեց և մշակվեց Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տեղեկատվական գերմայրուղու ծրագրի իրականացմանը և գերմայրուղու միջոցով Եվրոպան և Ասիան իրար կապակցելու գաղափարին ուղղված բանաձև, որը կհաստատվի ս.թ. հոկտեմբերի 10-ին Բանգկոկում կայանալիք Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում հանուն Կայուն զարգացման տիեզերական նախագծերի երրորդ նախարարական համաժողովի ընթացքում:

Ինֆորմացիոն գերմայրուղու նախագիծը ենթադրում է օպտիկական ինտերնետային ցանցի ընդլայնում՝ ներառելով Ասիական երկրները, ամբողջական օպտիկամալուխային հուսալի ցանցի կառուցմամբ միացնելով ծովային և ցամաքային օպտիկական ինֆորմացիոն մայրուղիները:

Հանդիպման ընթացքում ելույթով հանդես եկավ նախարարի առաջին տեղակալ Հակոբ Արշակյանը՝ կարևորելով տարածաշրջանային նմանատիպ ծրագրերին Հայաստանի ինտեգրումը: Նա ընդգծեց, որ յուրաքանչյուր երկրի համար ինֆորմացիոն մայրուղիները

նույնքան կարևոր են, որքան էներգետիկ ուղիները, իսկ միջազգային ցանցերում Հայաստանի ներգրավվածությունը նաև անվտանգության և բարեկեցության երաշխիք է:

Անդրադարձ կատարվեց նաև Հայաստանի ՏՏ ոլորտի վերջին ձեռբերումներին, ընդգծվեց հայ մասնագետների մեծ ներուժն ու փորձը:

Նիստի ընթացքում Հակոբ Արշակյանը անդրադարձավ Հայաստանի համար ինտեգրացիոն նախագծերի կարևորությանը, ինչը պայմանավորված է աշխարհագրական դիրքով՝ դեպի ծով ելք չունենալու հանգամանքով: Նշվեց նաև, որ այդ գործոնի հետևանքով Հայաստանը չունի հավասար հնարավորություններ ծովային ուղիների և ծովային օպտիկական ենթակառուցվածքների օգտագործման համար:

Սույն նիստի ընթացքում քննարկվեց տարածաշրջանային տեղեկատվական մայրուղիների Հայաստանի տարածքով անցնելու հարցը, քանի որ այդպիսի ենթակառուցվածքները մեծ ազդեցություն են ունենում երկրի անվտանգության, տեխնոլոգիաների տարածման և զարգացման, որակյալ ինտերնետի տարածման, ներդրումային դաշտի ակտիվացման, միջազգային դասակարգիչներում Հայաստանի դիրքի բարելավման և բազմաթիվ այլ տեսանկյուններից:

Միջոցառման ընթացքում ներկայացվեց նաև ներկայումս Հայաստանում իրականացվող ճանապարհաշինական ամենամեծ ծրագրերից մեկը՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը»: Նախարարի առաջին տեղակալը հրավիրեց շահագրգիռ անդամ-պետություններին ու գործընկերներին համագործակցելու այդ ենթակառուցվածքային ծրագրի նպատակները իրականացնելու ուղությամբ՝ միացնելով հյուսիսը հարավին՝ ներառյալ ճանապարհները և տեղեկատվական մայրուղիները, որոնք ծառայում են որպես տարածաշրջանային ինտեգրացիոն նախագծերի և Ասիա-խաղաղօվկիանոսյան տեղեկատվական գերմայրուղու բաղկացուցիչ մաս:

Նիստի ավարտին հայկական կողմի առաջարկով «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը»՝ որպես Ասիա-խաղաղօվկիանոսյան տեղեկատվական գերմայրուղու ծրագրի բաղկացուցիչ մաս, ներառվեց նիստի զեկույցում՝ անդամ երկրների կոնսեսուսի միջոցով:

♦ **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

Այցի շրջանակներում Հակոբ Արշակյանը հանդիպեց Թայլանդի Թագավորությունում Հայաստանի պատվո հյուպատոս Արտո Արթինյանի և հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Նախարարի տեղակալը հանդես եկավ հայտարարությամբ՝ ընդգծելով նրանցից յուրաքանչյուրի ունեցած գիտելիքի, փորձի, միջազգային կապերի և ֆինանսական ռեսուրսների ներդրման կարևորությունը՝ ի շահ Հայաստանի Հանրապետության: Տեղի ունեցավ քննարկում և մտքերի փոխանակություն Հայաստանում հնարավոր ներդրումների հետ կապված: Հիմնական շեշտադրումները դրվեցին ազատ տնտեսական գոտիների անարդյունավետության վրա, որոնց ստեղծած միջավայրը, ըստ ներկաներից մի քանիսի, գրավիչ չէ ներդրողների համար:

♦ **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Հակոբ Արշակյան
04.09.2018թ.